ՊԱՇՏՈՆ	Համապատասխանության ապահովման ծառայության գլխավոր մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	02/04/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	25/04/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով պատասխանատու է լինելու ստորև նշված աշխատանքային պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բաժնի եռամսյակային պլանով և ընթացիկ սահմանված հանձնարարականների կատարում, վարչության ղեկավարի և բաժնի ղեկավարի կողմից սահմանված առաջադրանքների իրականացում,
- Ուսումնասիրությունների և ստուգումների իրականացում՝ համաձայն սահմանված եռամսյակային պլանի, ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքների վերաբերյալ զեկուցագրերի և/կամ հաշվետվությունների կազմում,
- Ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում կազմված հաշվետվությունների արդյունքների հիման վրա միջոցառումների պլանի կազմում,
- Ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում կազմված միջոցառումների պլանի կատարողականի հետստուգման իրականացում,
- ՀՀ ԿԲ կողմից ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականի ստուգում (ըստ անհրաժեշտության),
- Ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում համապատասխան աշխատանքային փաստաթղթերում գրանցումների իրականացում, հիմքերի պահպանում՝ համաձայն ներքին աշխատանքային պրակտիկայի,
- Յուրաքանչյուր գործընթացի ուսումնասիրության ընթացքում նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջների համապատասխանության գնահատում,
- Յուրաքանչյուր գործընթացի ուսումնասիրության ընթացքում տվյալ գործընթացին համապատասխան ռիսկերի բացահայտում և ներքին հսկողական համակարգի գնահատում, այդ թվում՝ համապատասխանության ռիսկի,
- Բանկի ներքին իրավական ակտերի էլեկտրոնային հաշվառման ապահովում, դրանց տեղադրում Բանկի պորտալում, ներքին իրավական ակտերի արխիվի վարում:
- Օրենսդրության փոփոխությունների իրավական ազդեցության գնահատում,
- Բանկի համբավի ռիսկի կառավարման գործընթացի ուսումնասիրություն,
- ԱՔՌԱ համակարգով իրականացված հարցումների փաստաթղթային հիմնավորվածության ընտրանքային ուսումնասիրություն,
- Բողոք-պահանջների և բողոք-առաջարկների, ինչպես նաև գործառնական ռիսկ պարունակող պատահարներից և բարելավման առաջարկներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն,
- Մասնաճյուղերի դրամարկղերում և դրամապահոցում առկա դրամական միջոցների, դրամապահոցում հաշվառված գրավադրված ոսկյա իրերի պարկերի քանակների հանկարծակի գույքագրման իրականացում՝ համաձայն եռամսյակային պլանի և/կամ ստացված հանձնարարականների,

- Բացահայտված և հնարավոր խարդախության դեպքերի ուսումնասիրություն՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ ստորաբաժանումների աշխատակիցների հետ,
- Բանկի աշխատակիցների գործունեության և գործարար վարվելակերպի կանոնների պահպանման նկատմամբ ստուգումների իրականացում,
- Անհրաժեշտության դեպքում զեկուցագրերի, հաշվետվությունների թարգմանություն անգլերեն և ռուսերեն լեզուներով,
- Մեթոդաբանական խորհրդատվության տրամադրում Բանկի աշխատակիցներին,
- Նոր մշակվող կամ փոփոխվող ներքին ակտերի համապատասխանության գնահատում օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների տեսանկյունից,
- ՀՀ օրենսդրության համապատասխանության տեսանկյունից Բանկի կողմից հրապարակված գովազդային նյութերի ուսումնասիրություն,
- Բանկի ստորաբաժանումներին օրենսդրության նախագծերի և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- ՕՀՀՀԱ/FATCA պահանջների ապահովման գործառույթի իրականացում,
- Վարքագծի նոր կանոնների, ներքին ակտերի կարևոր փոփոխությունների, ներքին շրջաբերականների, ինչպես նաև օրենսդրական վերջին փոփոխությունների մասին ուսուցողական նյութերի պատրաստում, ուսուցումների կազմակերպում և անցկացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ
- Բանկային օրենսդրության և Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Վերլուծական հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Հաղորդակցման հմտություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Լեզուների իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/124 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:
«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: